էին կացնում եկեղեցու որևէ մասում եղած ծակով, կամ հոր շալվարի ոտ-տէրի միջով[78] կամ ննջեցյալին տանելիս՝ նաժի տակով։ Ապագա հնարավոր հիվանդությունից կամ անհաջողությունից պաշտպանվելու համար ուխտավորները խմբովին անց էին կենում Ս. Կակոփի՝ Հակոբի քարայրի միջով՝ մի կողմից մտնելով, մյուս կողմից դուրս գալով։ Հիվանդացած անասունը քշում էին դրվազայի կամ հատկապես այդ նպատակով կառուցված դարպասաձև բացվածքի միջով։

Հիվանդությունը կարելի էր ձգել, մղել ուղած կողմը, ինչպես մի իր։ Երկարատև հիվանդությամբ տառապողն իր ձեռքի թաթը՝ մատները լայն բաց արած շրջում էր երեսով վեր և մի այնպիսի շարժում անում իր կարծեցյալ թշնամու կողմը, կարծես մի իր իրենից մղելիս լիներ և ասում էր՝ «Ա՜ռ, էս էլ քեզ»։

Ենթադրվում էր, որ այդ թշնամին որևէ չար ոգի, ֆաշկ կամ մի նախանձոտ մարդ էր։

Հիվանդությունը կարելի էր մի կտորի հանձնել և կապել ծառի ճյուղին, հանձնել քարին՝ այդ քարը քսելով հիվանդ տեղին և քարը կպցնել սրբավայրի պատին, մանավանդ Խուստուփի, կամ մի թելով կախել այնտեղ, օրինակ՝ Գորիսի Նրհատակի, Սրի Մրտnirիսի այրում։ Հիվանդ անասունին պետք էր երեք անգամ շրջեցնել սուրբ ծառի շուրջը և այդտեղ կոտրել այն մահակը, որով անասունին այդտեղ էին քշել։ Այդ կտորների հետ այդ վայրում կմնար նաև այդ կտորներին կպած հիվանդությունը։

Հիվանդությունը պատկերվում էր երբեմն կենդանական առանձնահատկություններով օժտված մի էակ, և եթե նա չի նկատվում որպես մարդու մեջ բնակված ֆաշկ, սակայն նկատվում էր որպես մի քաշկանման էակ, որին կարելի էր մարմնից դուրս վռնդել, օրինակ, հոգնեցնելով։ Այս մտայնությամբ է թելադրված բժշկության մի վերին աստիճանի դաժան միջոց, որով կարծում էին, թե օգնության էին գալիս խրղլացավով բռնված մարդուն (մեծ մասամբ կնոջը), որը մի անհաջողությունից կամ ծանր ապրումներից հիվանդացած էր լինում։ Այսպես, Արծվանիկում մի կին չորս երեխա կորցնելուց հետո, երբ հինգերորդ ծնվածին էլ է կորցնում, անծայր տրտմությամբ համակված սկսում է վատ աշխատել, կորվել արտաքին անցուդարձից և հենց որ մի տեղ երգի կամ նվագի ձայն էր լսում, խսկույն սկսում էր պարել։ Նրան տանում էին այն տները, որտեղ լաց էին լինում նոր ննջեցյալի վրա՝ լաց լինելու և արցունք թափելու համար, որպեսզի արտասուքի հետ նրա վիշտն էլ փարատվի, սակայն լաց լինելու փոխարեն նա սկսում էր ծափ տալ և պարել։ Զանազան բժիշկների խորհուրդներին դիմելուց հետո ազգականները վերհիշում են պապերից մնացած միջոցը։ Նրանք հրավիրում են զուռնա-դավալ և ստիպում են հիվանդին նրանց նվագով պարել, իրենք էլ հերթով նրա հետ էին պարում, հիվանդին թույլ չտալով պարը դադարեցնել։ Երբ հիվանդ կինը սկսում էր գանգատվել ոտքերի և ձեռքերի ցավից, գլխացավից և մրսելուց, պարը դադարեցնում էին նույն կամ մյուս օրը կրկնելու համար, մինչև որ հիվանդը չափազանց հոգնելուց հետո երկար քուն էր մրտնում։ Արթնանալուց հետո նա բոլորովին առողջանում էր։ Խրղլացավի այս եղանակով բուժելու դեպքեր պատմում էին նաև Բեխում և այլ գյուղերում։ Հոգնեցնելով հիվանդին՝ հոգնեցնում էին և հիվանդությունը որպես մի կեն-

[78] *Григоров, Н.*, Село Татев, СМОМПК, вып. XIII, отд. I, էջ 117: